ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-20-1/1-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 06.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Հենրի Ռադիո» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 27.12.2019թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-1/1-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում 10 278 000 (տասը միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Հենրի Ռադիո» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք.Երևան, Ավան Նարեկացի 1,15 բն.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 9000110224537	Հ/Հ 163058161064
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00858527
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-1/1-2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Անվանումը	Չափ. միավ.	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր գումարը	Ապրանքների մատակարարումը 2020թ 2-րդ եռամսյակ
2	ալեհավաքներ և արտացոլիչներ	հատ	15	94800	1422000	15
3	ալեհավաքներ և արտացոլիչներ	հատ	15	172800	2592000	15
4	հեռահաղորդակցման միջոցներ	հատ	15	148800	2232000	15
5	սնուցման բլոկ	հատ	30	76800	2304000	30
6	սնուցման բլոկ	հատ	10	96000	960000	10
7	ալեհավաքներ և արտացոլիչներ	հատ	10	38400	384000	10
8	ալեհավաքներ և արտացոլիչներ	հատ	10	38400	384000	10

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Հենրի Ռադիո» ՍՊԸ տնօրեն

Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-1/1-2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	անվանումը	CPV կոդը	Գնման առարկայի Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2	ալեհավաքներ և արտացոլիչներ	32351150/505	1422000	1422000	1422000	1422000	1422000	1422000	1422000	1422000	1422000
3	ալեհավաքներ և արտացոլիչներ	32351150/506	2592000	2592000	2592000	2592000	2592000	2592000	2592000	2592000	2592000
4	հեռահաղորդակցման միջոցներ	32521300/501	2232000	2232000	2232000	2232000	2232000	2232000	2232000	2232000	2232000
5	սնուցման բլոկ	30237112/507	2304000	2304000	2304000	2304000	2304000	2304000	2304000	2304000	2304000
6	սնուցման բլոկ	30237112/508	960000	960000	960000	960000	960000	960000	960000	960000	960000
7	ալեհավաքներ և արտացոլիչներ	32351150/507	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000
8	ալեհավաքներ և արտացոլիչներ	32351150/508	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000	384000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՑՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Հենրի Ռադիո» ՍՊԸ տնօրեն

Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ